

ՀԱՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՀ-Հայաստանն իրականացրել է շահառուների վերլուծություն՝ համաձայն Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) կողմից վերանայված շահառուների վերլուծության նոր ուղեցույցի և մոտեցման, որն ի լրումն վերլուծության մեջ հասցեագրված կենցեպտուալ խնդիրների՝ հիմնականում արտացոլում է ծրագրի ակնկալվող անհատ շահառուների թվաքանակի հստակեցման և հաշվարկման մոտեցումը: Շահառուների վերլուծության նոր ուղեցույցն օգտակար գործիք է հանդիսանում ծրագրի ազդեցությունը աղքատ բնակչության վրա կանխատեսելիս առկա փաստերը/ենթադրությունները քննարկելու ժամանակ և երաշխավորում է ՀԱՀ-Հայաստանի կողմից արդյունավետ միջոցների օգտագործումը աղքատության կրճատման համար:

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Տվյալ վերլուծության միջոցով ՀԱՀ-Հայաստանը վերանայում և սահմանում է Գյուղական ճանապարհների վերականգնում (ԳՃՎ) ենթածրագրի, Ոռոգվող գյուղատնտեսություն (ՈԳ) ենթածրագրի ենթակառուցվածքներ և Ջրից դեպի Շուկա (ՋԴՇ) բաղադրիչների շահառուների թիվը:

Վերանայումն իրականացնելիս ՀԱՀ-Հայաստանն առաջնորդվել է հետևյալ հիմնական նկատառումներով.

- բացահայտել ծրագրի ծավալների փոփոխության ազդեցությունը շահառուների թվաքանակի վրա,
- ՀԱՀ-Հայաստանի մոտեցումը շահառուների հաշվարկին համապատասխանեցնել ՀՄԿ Շահառուների վերլուծության նոր ուղեցույցի պահանջներին:

Ա. ՀԱՀ-Հայաստան ծրագրի վերանայումը և շահառուները

Ի սկզբանե նախատեսվում էր, որ ՀԱՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի շրջանակներում վերանորոգված կենսական նշանակություն ունեցող 943 կմ բարձր առաջնայնության գյուղական ճանապարհների վերականգնման արդյունքներից կօգտվի ՀՀ 265 գյուղական համայնքների շուրջ 360,000 բնակիչ: Ակնկալվում էր նաև, որ 100,000 ջրօգտագործող կշահի ավելացած ոռոգվող հողատարածքներից, 24,000 ֆերմեր՝ դրեմաժային համակարգի բարելավման արդյունքում և 28,000 ֆերմեր կշարունակի ոռոգել իր հողատարածքները Ոռոգվող գյուղատնտեսություն

Ենթաձրագրի Ենթակառուցվածքներ բաղադրիչի իրականացման շնորհիվ: ՈԳ ենթաձրագրի Ձրից դեպի Շուկա բաղադրիչի շահառուների թիվը կազմում էր շուրջ 300,000 ֆերմեր՝ ոռոգման համակարգի կազմակերպությունների ինստիտուցիոնալ հզորացման միջոցով, շուրջ 60,000 ֆերմեր՝ ջրի ներտնտեսային կառավարման և բարձրաժեք գյուղատնտեսության ուղղությամբ վերապատրաստման միջոցով, ինչպես նաև 300 ձեռնարկություններ ու 15,000 ֆերմերներ՝ հետբերքահավաքային վերանշակման ու շուկայավարման բարելավման միջոցով:

Միջկառավարական համաձայնագրի իրականացման ընթացքում ինչպես ԳԵՎ ենթաձրագիրը, այնպես էլ Ենթակառուցվածքներ բաղադրիչը ենթարկվել են զգալի փոփոխությունների և արդյունքում կրճատվել են մեկ երրորդով: Փոփոխությունների հիմնական պատճառը վերջին երեք տարիների ընթացքում ԱՄՆ դոլարի արժեզրկումն է ՀՀ դրամի համեմատ և շինարարական աշխատանքների գների աճը: Միջկառավարական համաձայնագրով նախատեսվում էր վերականգնել 943 կմ գյուղական ճանապարհ կամ Հայաստանի կենսական նշանակության ճանապարհային ցանցի մոտ մեկ երրորդը, որի ընդհանուր երկարությունը 3019 կմ է, իսկ վերանայումից հետո ՀԱՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում հնարավոր կլինեին վերանորոգել միայն 297 կմ գյուղական ճանապարհ: Միջկառավարական համաձայնագրով Ենթակառուցվածքներ բաղադրիչի շրջանակներում նախատեսվում էր կառուցել 7 ջրամբար և 18 ինքնահոս համակարգ, ինչպես նաև վերանորոգել 68 պոմպակայան, 198 կմ մայր ջրանցք և 588 կմ երրորդ կարգի ջրանցքներ: Սակայն վերանայումից հետո Ենթակառուցվածքներ բաղադրիչով ոչ մի ջրամբար չի նախատեսվում կառուցել, իսկ մնացած աշխատանքների ծավալը զգալիորեն կրճատվել է: Ավելին, ՀԱՀ-ի Տնօրենների խորհրդի 2009թ. հունիսի որոշման համաձայն՝ ՀԱՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթաձրագրի ֆինանսավորումը դադարեցվեց¹: Այսինքն, ՀԱՀ-Հայաստան ծրագրով նախատեսված մնացած ճանապարհային հատվածներն այլևս չեն վերանորոգվի համաձայնագրի շրջանակներում:

Արդյունքում, անհրաժեշտություն է առաջանում վերանայել և թարմացնել ՀԱՀ-Հայաստան ծրագրի շահառուների հաշվարկը և տեսնել, թե արդյոք շահառուների թիվը զգալիորեն կրճատվել է վերանայման և ծրագրի ծավալների վերջերս տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում:

Բ. Շահառուների սահմանումը ՀԱՀ նոր ուղեցույցի համաձայն

Համաձայն ՀԱՀ Շահառուների վերլուծության նոր ուղեցույցի՝ շահառուները հիմնականում դասակարգվում են ստորև բերված երեք խմբերում.

- *Ազգային կամ տարածաշրջանային ներդրումներ*, որոնք ներառում են ենթակառուցվածքների լայնածավալ ծրագրեր և ենթադրաբար պետք է ազդեն տնտեսության աշխարհագրական շրջանների վրա՝ այդ շրջանների բոլոր քաղաքացիներին դարձնելով շահառու:

¹ 2009թ. հունիսի 10-ին հրապարակված մամլո հաղորդագրության մեջ ՀԱՀ Տնօրենների խորհուրդը հայտարարել է, որ ՀԱՀ-Հայաստան ծրագրի ֆինանսավորման կասեցումը շարունակում է ուժի մեջ մնալ, և հայտնել, որ “ՀԱՀ-ն այլևս չի վերսկսի ճանապարհաշինության ֆինանսավորումը” Հայաստանում:

- *Լայնածավալ ներդրումներ*, ներառյալ այլ մեծածավալ ներդրումները, որոնց շահառուները համարվում են նոր կամ բարելավված հանրային համակարգերից օգտվողները:
- *Թիրախային ծրագրեր*, ներառյալ բոլոր մնացած գործողությունները, որոնք օգուտ են բերում հատուկ անձանց և տնային տնտեսությունների, ինչպես օրինակ՝ գյուղատնտեսության զարգացմանը, դպրոցների շինարարությանը կամ կրթական բարեփոխումների այլ միջոցառումներին միտված ծրագրեր:

ՀՄՀ-Հայաստանը գտնում է, որ ԳՖՎ ենթածրագրի և ենթակառուցվածքներ բաղադրիչի, ինչպես նաև Ոռոգման համակարգի կառավարման կառույցների ինստիտուցիոնալ հզորացման ենթածրագրի շահառուների ակնկալվող թիվը կարելի է դիտարկել *Լայնածավալ ներդրումներ* դասակարգի ներքո, մինչդեռ Ջրից դեպի շուկա ենթածրագրի շահառուները կարող են դասվել *Թիրախային ծրագրերին*:

Այսպիսով, ստորև բերված բաժիններում ՀՄՀ-Հայաստանը ներկայացնում է շահառուների վերանայված թիվը յուրաքանչյուր ծրագրային բաղադրիչով՝ հիմնվելով ծրագրի վերանայված արդյունքների և շահառուների վերլուծության նոր մատեցման վրա:

II. ՏՎՅԱԼՆԵՐԻ ՍՈՒՏՔԱԳՐՄԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ


2.1. Սոտեցումներ և եզրակացություններ

2.1.1. Ընդհանուր մոտեցումներ

ՀՄՀ-Հայաստանի շահառուների վերլուծության համար հիմք են ընդունվել հետևյալ մոտեցումները.

- Ստեղծված տվյալների բազան պետք է թույլ տա հնարավորինս շատ տվյալների ներկայացում, շահառուները պետք է հավաքագրվեն առնվազն երկու հիմնական մակարդակներով՝ *ծրագրային և ենթածրագրային*:
- Շահառուների ընդհանուր թիվը չպետք է ներառի կրկնակի հաշվառումը:
- Տվյալների բազաները պետք է նաև թույլ տան շահառուների բաշխումն ըստ մարզերի, համայնքների, գեների, ծրագրի, բաղադրիչի և անհրաժեշտության դեպքում՝ ենթաբաղադրիչի:

Տվյալ վերլուծության արդյունքում կներկայացվի ՀՄՀ-Հայաստան ամբողջ ծրագրի շահառուների թիվը, ինչպես նաև Գյուղական ճանապարհների վերականգնում (ԳՖՎ) ենթածրագրի և Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրերի համար առանձին: Ստորև բերված սխեման ներկայացնում է, թե ինչ մակարդակի վրա կհավաքագրվեն և կներկայացվեն շահառուները:



2.1.2. Գյուղական ճանապարհների վերականգնում (ԳՃԿ) ենթածրագրի ուղղությամբ որդեգրված մոտեցումներ և արված ենթադրություններ (լայնածավալ)

ԳՃԿ ենթածրագրի շահառուների վերահաշվարկը հիմնվում է հետևյալ ենթադրությունների վրա.

- ՀՄՀ-Հայաստանի ծրագրի շահառու են համարվում այն գյուղական համայնքները, որոնք ՀՄՀ-Հայաստանի ծրագրի վերանայումից հետո Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի շրջանակներում վերանորոգվող ճանապարհահատվածների վրա են տեղակայված: Այս համայնքները ՀՄՀ-Հայաստանի Պիլոտային ծրագրի շրջանակներում արդեն իսկ վերանորոգված ավելի քան 24 կմ ճանապարհահատվածի վրա գտնվող գյուղական համայնքներն են, ինչպես նաև ծրագրային առաջին փաթեթում ընդգրկված 273 կմ ճանապարհահատվածի վրա տեղակայված համայնքները: Այսուհանդերձ, ՀՄԿ Խորհրդի 2009թ. հունիս ամսին կայացրած որոշումից հետո մեր շահառուների վերջնական հաշվարկն իրականացնելիս ՀՄՀ-Հայաստանի ծրագրի շահառու են համարվում ԳՃԿ ենթածրագրի միայն Պիլոտային ճանապարհահատվածների վրա տեղակայված գյուղական համայնքները:
- ՀՄՀ-Հայաստանի ծրագրի շահառու են համարվում այն գյուղական համայնքները, որոնք անմիջապես տեղակայված չեն ճանապարհահատվածների վրա, սակայն ա/ու նեն միայն մեկ ելք դեպի մայրուղի և այդ ելքն անցնում է ՀՄՀ-Հայաստանի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի շրջանակներում


վերանորոգված ճանապարհահատվածի միջով, ինչպես նաև ք/ ոչ ավել քան 5 կմ հեռավորության վրա են գտնվում տվյալ ԳՖՎ ենթաօրագրի ճանապարհահատվածից:

- Հաջորդ ենթադրությունն այն էր, որ այս համայնքներում ներկայումս ապրող ամբողջ բնակչությունը՝ ըստ ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալների, կհանդիսանա ծրագրի շահառու: Մարդահամարը տրամադրում է երկու տվյալ՝ առկա բնակչության (*de facto*) և մշտական բնակչության (*de jure*) վերաբերյալ: Առկա բնակչություն է համարվում մարդահամարի անցկացման ժամանակ տվյալ վայրում ապրող բնակչությունը: Մշտական է կոչվում այն բնակչությունը, որը գրանցված է տվյալ բնակավայրում մարդահամարի անցկացման պահին: Արդյունքում, մշտական բնակչությունը, որպես կանոն, գերազանցում է առկա բնակչությանը: Վերլուծությունն անցկացնելիս առավել պահպանողական մոտեցում որդեգրելու նպատակով մենք ենթադրեցինք, որ ՀԱՀ-Հայաստանի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթաօրագրի շահառուների թիվը ստանալու համար պետք է գործածվի մեր ցանկերում ընդգրկված գյուղական համայնքների **առկա բնակչության** թիվը:

2.1.3. Ոռոգվող գյուղատնտեսություն (ՈԳ) ենթաօրագրի ուղղությամբ որդեգրված մոտեցումներ և արված ենթադրություններ (լայնածավալ)

ՈԳ ենթաօրագրի շահառուների վերահաշվարկը հիմնվում է հետևյալ ենթադրությունների վրա.

ՀԱՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթաօրագիրը բաղկացած է երկու բաղադրիչներից և մեկ ենթաբաղադրիչից՝ Ենթակառուցվածքներ և Ջրից դեպի Շուկա (ՋԴՇ) բաղադրիչներ և Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչ:



Ոռոգվող գյուղատնտեսությունն ենթաժրագրի շահառուների վերլուծության համար համապատասխան մոտեցում որդեգրելիս ՀԱՀ-Հայաստանը ենթադրում էր, որ ՈԳ ենթաժրագրի շահառուների ընդհանուր թիվը պետք է հավասար լինի ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների թվին: Սույն ենթադրությունը հիմնված է հետևյալ դրույթների վրա.

- Համաձայն ՀԱՀ-ի կողմից վերանայված շահառուների վերլուծության նոր ուղեցույցի՝ ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուները դասակարգվում են *լայնածավալ ներդրումներ* խմբավորման ներքո, մինչդեռ Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շահառուները հանդիսանում են *թիրախային ծրագրերի* շահառուներ: ՋրՀ շահառուներ կարող են համարվել ՋրՀ բաղադրիչի շրջանակներում վերապատրաստված այն ֆերմերները, որոնք կկիրառեն ոռոգման մեթոդներ: Սա ենթադրում է, որ ՋրՀ-ի հետ համեմատած՝ ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների թիվն ավելի մեծ կլինի:
- ՋրՀ համայնքները հիմնականում հանրնկնում են ենթակառուցվածքներ բաղադրիչի ներքո գտնվող գյուղական համայնքների հետ: Հետևաբար, ՋրՀ շահառուները, որոնք ըստ ՀԱՀ նոր ուղեցույցի դասակարգվում են որպես թիրախային, ամենայն հավանականությամբ արդեն իսկ ընդգրկված են ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների ցանկում: Այն փաստը, որ ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուներին հաշվելու համար գործածում ենք առկա բնակչության թիվը, վկայում է այն մասին որ կիրառողների նախահաշվարկված թվին ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների թիվն ավելացնելու պարագայում մենք, ամենայն հավանականությամբ, չենք խուսափի շահառուներին կրկնակի հաշվարկած լինելու վտանգից:
- ՋրՀ բաղադրիչի Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչի շահառուները նույնպես հանդես են գալիս *լայնածավալ ներդրում* խմբավորման ներքո; Այսուհանդերձ, ելնելով այն հանգամանքից, որ Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչը մեծամասամբ աշխատում է Ջրօգտագործողների ընկերությունների (ՋՕԸ) և ոչ անմիջապես բնակչության հետ, մենք ենթադրում ենք, որ այս ենթաբաղադրիչի ուղղությամբ սպասվելիք փոփոխությունները տեղի կունենան ավելի դանդաղ ընթացքով, ուստի շահառուների հաշվարկները կատարելիս պահպանողական ենք գտնվել: Մյուս կողմից, Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչի ներքո գտնվող բոլոր ՋՕԸ-ը, և ենթակառուցվածքներ բաղադրիչի տակ թվարկված բոլոր համայնքները ՋՕԸ-ի անդամներ են: Այսպես, մենք ենթադրում ենք, որ Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչի պոտենցիալ շահառուները պետք է նաև օգտվեն ենթակառուցվածքներ բաղադրիչից և այսպիսով հանդիսանան վերջինիս շահառուները: Ավելին, ենթակառուցվածքներ բաղադրիչի ցանկում ներառված համայնքները և դրանց ջրօգտագործողներն ամբողջովին կօգտվեն Ոռոգվող գյուղատնտեսությունն ենթաժրագրից, ինչպես նաև ՋրՀ, ենթակառուցվածքներ բաղադրիչներից և Կառուցվածքային ամրապնդում ենթաբաղադրիչից:

2.1.4. Ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների վերլուծությունը կատարելիս ՉԱՀ-Հայաստան ծրագրի կողմից արվել են հետևյալ ենթադրությունները.

- Տեխնիկատնտեսական ուսումնասիրության արդյունքում ընտրված և այնուհետև ՉԱՀ-Հայաստան ծրագրի Ոռոգման և Բնապահպանության ու սոցիալական ազդեցության թիմերի կողմից հաստատված համայնքները ներառվել են շահառուների վերլուծության մեջ որպես կոնկրետ ենթակառուցվածքների բարենորոգումից օգտվող համայնքներ:
- Մայր ջրանցքների բարենորոգումն ուղղակի ազդեցություն չի ունենա ջրանցքի սկզբնային և միջին հատվածներում բնակվող ջրօգտագործողների վրա, մինչդեռ ջրանցքից առավել հեռու տեղակայված ջրօգտագործողների ոռոգումը նկատելիորեն կբարելավվի՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս ընդլայնել ոռոգվող հողատարածքի չափը: Այսպիսով, ՉԱՀ-Հայաստանը շահառուների հաշվարկները կատարելիս որդեգրում է առավել պահպանողական մոտեցում և գտնում, որ մայր ջրանցքներից օգտվող ջրօգտագործողների միայն 30%-ը կարող է համարվել շահառու:
- ՉԱՀ-Հայաստանը գտնում է, որ երրորդային ջրանցքների վերականգնման աշխատանքներ նախատեսված համայնքներում ոչ բոլոր ֆերմերները կօգտվեն այս ենթակառուցվածքից: Ինչպես մայր ջրանցքների դեպքում էր, այստեղ մենք նույնպես հավատարիմ մնացինք վերը նշված պահպանողական հաշվարկներին և սահմանեցինք, որ երրորդային ջրանցքներից օգտվող ջրօգտագործողների միայն 30%-ն է շահառու:
- Քաղաքային բնակչությունը² հազվադեպ է օգտվում ենթակառուցվածքի վերականգնումից, հետևաբար, այստեղ ևս պահպանողական հաշվարկ կատարվեց և սահմանվեց, որ քաղաքային բնակչության միայն 30%-ն է կազմում ծրագրի շահառու:
- Ծրագրային միջամտության մնացյալ դեպքերում՝ ինքնահոս համակարգ, պոմպակայաններ և դրենաժ, ՉԱՀ-Հայաստանը ենթադրում է, որ բոլոր պոտենցիալ շահառուները կօգտվեն ծրագրից:
- Ի սկզբանե ՉԱՀ-Հայաստանը կարծում էր, որ ՈԳ ենթածրագրի պոտենցիալ շահառուները ջրօգտագործողներն են, այն է՝ ՋՕԸ-ի անդամները: Արդյունքում, ՋՕԸ-ի տվյալներն օգտագործվեցին Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շահառու ջրօգտագործողների թիվը ստանալու համար: Յուրաքանչյուր համայնքի առկա բնակչության թիվը (ընդամենը, տղամարդ/կին) մուտքագրվեց աղյուսակում: Ինչ վերաբերում է ճանապարհներին, ՀՀ 2001թ. մարդահամարի տվյալները որպես աղբյուր ծառայեցին բնակչության թվի հաշվարկման գործում: Այնուհետև, ջրօգտագործողների մուտքագրված թիվը բազմապատկվեց տնային տնտեսությունների անդամների միջին թվի հետ, որը համաձայն ՏՆային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության վերջին արդյունքների՝ գյուղական վայրերում կազմում է չորս անդամ: Այնուամենայնիվ, այս

² Հայաստանում առկա են որոշ քաղաքային բնակավայրեր, որտեղ բնակչությունը հիմնականում ներգրավված է գյուղատնտեսական աշխատանքներում:

գործողությունները կատարելիս պարզ դարձավ, որ որոշ դեպքերում տվյալ համայնքում ստացված վերջնական թիվը ավելի բարձր է կազմում, քան առկա բնակչության թիվը: Ուստի՝ որոշում կայացվեց ՈԳ ենթածրագրի շահառուների թվի հաշվարկման համար օգտագործել բացառապես առկա բնակչության թիվը:

2.1.5. ՁԻՇ բաղադրիչի շահառուների վերլուծությունը կատարելիս հիմնվել ենք ներքոհիշյալի վրա.

- Չնայած մեր կողմից կատարված վերլուծության մեջ Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շահառուների ընդհանուր թիվը հավասար է ենթակառուցվածքներ բաղադրիչի շահառուների թվին, ներառյալ ՁԻՇ շահառուներին՝ ՁԻՇ շահառուներին առանձին անդրադառնալու պարագայում վերջիններիս սահմանում ենք *Թիրախային ծրագրի* շահառուներ դասակարգման տակ: Այս պարագայում ՁԻՇ շահառուներ են համարվում ՁԻՇ բաղադրիչի շրջանակներում վերապատրաստված այն ֆերմերները, որոնք կկիրառեն դասավանդվող բարելավումներից/մեթոդներից մեկը կամ մի քանիսը: Արդյունքում, ՁԻՇ բաղադրիչի շահառուների թիվը ստացվել է ՁԻՇ-ի վերանայված Տնտեսական օգտակարության գործակցի հաշվարկներից:

2.2. Շահառուների տվյալների բազա

Տվյալների բազան ստեղծվել է «Excel» միջավայրում՝ բաղկացած լինելով հետևյալ երեք էջերից.

ա/ Համաձայնագրի շահառուների վերլուծության հիման վրա կատարված հաշվարկներ, որտեղ ներկայացված է ՀՄՀ-Հայաստան Համաձայնագրի շահառուների վերլուծությունը 2009թ.-ից առաջ և հետո:

բ/ Շահառուների հիմնական ցանկ, որտեղ տրված է ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների ԸՆԴՀԱՆՈՒՐ թիվը՝ ԳՃՎ և ՈԳ ենթածրագրերինը ներառյալ՝ ներկայացված ըստ մարզի, համայնքի և կին/տղամարդ³ բաշխվածությամբ:

գ/ ՈԳ, որտեղ բերված է Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի շահառուների ԸՆԴՀԱՆՈՒՐ թիվը: Թիվը կարող է բաշխվել ըստ մարզի, ՋՕԸ-ի և համայնքի:

դ/ ԳՃՎ ենթածրագիր, որտեղ ներկայացված է ԳՃՎ ենթածրագրի շահառուների ԸՆԴՀԱՆՈՒՐ թիվը մինչև 2009թ. հունիս ամիսը: Թիվը կարող է բաշխվել ըստ մարզի, ճանապարհահատվածի և ծրագրային փաթեթի:

2.2.1. Տվյալների բազան ստեղծելիս կատարվել են հետևյալ քայլերը.

- Ստեղծվել է թարմացված հիմնական ցանկ «Excel» միջավայրում, որտեղ այբբենական կարգով ներկայացված են ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն

³ Կին/տղամարդ թվերը ներկայացնում են առկա բնակչության բաշխվածությունը և չեն հարմարեցվել ՈԳ և Ծրագրի շահառուների գենդերային բաշխվածության թվերը ստանալու համար:

ենթածրագրի ենթակառուցվածքներ բաղադրիչի վերանայումից հետո բոլոր շահառու համայնքները՝ բաշխված ըստ մարզի և ՋՕԸ-ի⁴: Կրկնահաշվարկից խուսափելու համար ցանկը բազմիցս վերանայվել է: Յուրաքանչյուր համայնքի դիմաց տրված է տվյալ համայնքում կատարված ծրագրային միջամտության մասին հակիրճ տեղեկատվություն:

- Մուտքագրված համայնքներն այնուհետև համեմատվել են Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագրի համայնքների հետ: Համակարգում մուտքագրվել են ԳՖՎ ենթածրագրի այն համայնքները, որտեղ ոռոգման ծրագիր չի իրականացվել: Յուրաքանչյուր համայնքի համար գործող այն ճանապարհատվածները, որոնք կօգտվեն ԳՖՎ ենթածրագրից նույնպես մուտքագրվել են բազայում:
- Համակարգում մուտքագրվել է յուրաքանչյուր համայնքի առկա բնակչության թիվը /ընդհանուր, տղամարդ/կին/: ՀՀ 2001թ.-ի մարդահամարի տվյալները որպես աղբյուր են ծառայել բնակչության թիվը մուտքագրելիս:
- Բնակչության թիվը մուտքագրելուց հետո, ստեղծվել է նոր խմբավորում՝ «ՈԳ շահառուների թիվը»: Վերը նկարագրված մոտեցման համաձայն՝ տվյալների սույն խմբավորումը ստանալու համար կատարվել են հետևյալ քայլերը. ա/ միայն մայր ջրանցքների կամ երրորդային ջրանցքների ներքո մուտքագրված համայնքների, և քաղաքային համայնքների դեպքում մենք ենթադրում ենք, որ առկա բնակչության միայն 30%-ն է օգտվելու ենթակառուցվածքներ բաղադրիչի կողմից կատարված ծրագրային միջամտությունից, ուստի այդ համայնքների համար առկա բնակչության թիվը բազմապատկում ենք 0.3-ով: Բ/ եթե համայնքն օգտվում է յուրաքանչյուր այլ ոռոգման համակարգից, մենք ենթադրում ենք, որ տվյալ համայնքում ապրող ամբողջ բնակչությունն է հանդիսանում շահառու և մուտքագրում առկա բնակչության թիվը տվյալ համայնքի դիմաց:
- Հիմնական ցանկում (շահառուների տվյալների բազայի առաջին էջ) ստեղծել ենք նաև մեկ այլ խմբավորում՝ «Շահառուների ընդհանուր թիվը», որտեղ «ՈԳ շահառուների թիվը» սյունակի համապատասխան տողի տակ ներկայացված յուրաքանչյուր համայնքի համար մուտքագրել ենք ոռոգման ծրագրի շահառուների ճշգրտված թիվը: Ավելացրել ենք նաև միայն ԳՖՎ ենթածրագրից օգտվող համայնքների առկա բնակչության թիվը:

III. ՀԱՀ-ՀԱՅԱՍՏԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՅԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԹԻՎ

Ներքոհիշյալ աղյուսակներ 1,2 և 3-ը ներկայացնում են ՀԱՀ-Հայաստանի վերանայված ծրագրային միջամտությունները՝ համապատասխան շահառուների թվաքանակով: 4-րդ աղյուսակում բերված է ՀԱՀ-Հայաստան համաձայնագրի շահառուների ամբողջական թիվը:

⁴ Ջրօգտագործողների ընկերություն (ՋՕԸ): Այս խմբավորումը ներառված է միայն ՈԳ աղյուսակում:

Աղյուսակ 1. ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնում ենթածրագիր			
	<i>Համաձայնագիր</i>	<i>2008թ. հունվարի վերանայումից հետո</i>	<i>2009թ. հուլիսի 1-ի դրությամբ</i>
Վերանորոգված ճանապարհային հատվածներ	943 կմ	297 կմ	24.4 կմ
Շահառուների թիվը	360,000 գյուղական բնակիչ	142,909 գյուղական բնակիչ	6,356 գյուղական բնակիչ
Շահառու համայնքների թիվը	260	84	12

Աղյուսակ 2. ՀՄՀ-Հայաստան ծրագրի ՈԳ ենթածրագիր, ենթակառուցվածքներ բաղադրիչ			
	<i>Համաձայնագիր</i>	<i>2008թ. հունվարի վերանայումից հետո</i>	<i>2009թ. հուլիսի 1-ի դրությամբ</i>
Ջրամբարներ (թիվ)	7	0	0
Ինքնահոս համակարգեր (թիվ)	18	7	4 ⁵
Պոմպակայաններ (թիվ)	68	17	17
Մայր ջրանցքներ (կմ)	198	34	27,7
Երրորդ կարգի ջրանցքներ (կմ)	588	220	220
Դրենաժային համակարգ (թիվ)	13	13	13
Շահառուների ընդհանուր թիվը ⁶	152,000	106,161	421,407
Շահառուների համայնքների թիվը	362	286	298

⁵ Ինքնահոս համակարգերի թիվն իջել է 7-ից 4-ի ծրագրի պաշտոնական վերանայման ավարտից հետո՝ տեխնիկական և տնտեսական նկատառումների պատճառով: Սակայն ՀՄՀ-Հայաստանը և ՀՄԿ-ն ներկայումս քննարկում են դուրս մնացած ինքնահոսերից առնվազն երկուսի /Հալավար և Սպիտակ/ ծրագրի վերադառնալու հավանականությունը:

⁶ Շահառուների ներկայիս թվերը հաշվարկվել են նոր մոտեցման հիման վրա, որը կիրառվել է շահառուների հաշվարկը ՀՄԿ նոր ուղեցույցի պահանջներին համապատասխանեցնելու համար: Արդյունքում, “2009թ. հուլիսի 1-ի դրությամբ” սյունակում ներկայացված թվերը հիմնված են ծրագրում ընդգրկված համայնքների առկա /դե ֆակտո/ բնակչության թվերի վրա, մինչդեռ “Համաձայնագիր” և “Վերանայում” սյունակներում այս թվերը հիմնված են ՋՕԸ-երի անդամների թվի վրա: Շահառուների վերլուծության մոտեցման մասին տե՛ս ՄԳ Պլանի Հավելված Ե-ն՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների վերլուծությունը:

Աղյուսակ 3. ՀԱՀ-Հայաստանի ՈԳ ենթածրագիր, ՋԴՇ բաղադրիչի ՋՕԸ անդամ ֆերմերների շահութաբերության բարձրացում			
	<i>Համաձայնագիր</i>	<i>2008թ. հունվարի վերանայումից հետո</i>	<i>2009թ. հունիսի 1-ի դրությամբ</i>
Ջրի ներտնտեսային կառավարման դասընթացներ անցած ֆերմերների թիվը	60,000	45,000	45,000
Բարձրարժեք գյուղատնտեսության դասընթացներ անցած ֆերմերների թիվը	30,000	36,000	36,000
Շահառուների թիվը⁷	38,350	28,834	28,834

Աղյուսակ 4. ՀԱՀ-Հայաստան ծրագրի շահառուները			Շահառու համայնքների թիվը	Շահառուների թիվը
ՀԱՀ-Հայաստանի Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագրի շահառուների հաշվարկված թիվը			298	421, 407
ՀԱՀ-Հայաստանի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շահառուների հաշվարկված թիվը			411	28,831
ՀԱՀ-Հայաստանի ԳՆՎ ենթածրագրի հաշվարկված թիվը մինչև 2009թ. հունիսը			84	142, 905
ՀԱՀ-Հայաստանի ԳՆՎ ենթածրագրի հաշվարկված թիվը 2009թ. հունիսից հետո			12	6356
ՀԱՀ-Հայաստան ծրագրի ընդհանուր շահառուների հաշվարկված թիվը մինչև 2009թ.			358	536,212
ՀԱՀ-Հայաստան ծրագրի ընդհանուր շահառուների հաշվարկված թիվը 2009թ. հունիսի դրությամբ (ՀՄԿ-ի հունիսի 10-ին Տնօրենների խորհուրդի որոշումից հետո)			310	427,763

⁷ ՋԴՇ շահառուները սահմանվում են Թիրախային ծրագրի շահառուներ դասակարգման տակ: Սա նշանակում է, որ այն ֆերմերները, որոնք Տնտեսական օգտակարության գործակցի (ՏՕԳ) հաշվարկների համաձայն, կկիրառեն վերապատրաստման դասընթացների ընթացքում դասավանդվող բարելավումները/մեթոդները, նրանք էլ կհամարվեն շահառուներ:

ՀԱՀ-Հայաստան